ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԳԼՈՒԽԿՈՏՐՈՒԿԸ. ԱՌԵՎՏՐԻ ՈԼՈՐՏԻ ՀԵՏՔԵՐՈՎ

DOI: 10.52174/2579-2989_2024.3-13

Հիմնաբառեր. *տնտեսական աճ, առևտրի ճեղք, մեծածախ, մրցունակություն, անորոշություն, աճի երկվություն*

Հայաստանի տնտեսական զարգացումներն այնքան կտրուկ են և շատ հաճախ՝ իրավիճակային, որ նույնիսկ կարճաժամկետում կարելի է «որսալ» էական տեղաշարժեր տնտեսական աճի այս տատանողական շղթայում:

Եթե նախորդ 2 համարներում տեղ գտած հոդվածները նվիրել էինք արդյունաբերության ու ծառայությունների ոլորտների մութ անկյունների բացահայտմանը, ապա այս անգամ հերթն առևտրինն է: Ծառայություններին շաղկապված այս ոլորտը շարունակում է բավական խոստումնալից աճ գրանցել: Սակայն, օրակարգային է մնում հետևյալ հարցը. մինչև ե՞րբ կարելի է նման աճի հույս փայփայել...

Այս և նույնաբնույթ հարցադրումների միջոցով փորձենք որոշակիություն հաղորդել աճի անորոշության այս հանգույցին:

Վերջին երկու տարիներին արձանագրվող բավական բարձր տնտեսական աճը (այժմ՝ թեև դանդաղող), որը շարունակվել է նույնիսկ 2024 թ.-ի առաջին եռամսյակում[1], որքան էլ հասարակության լայն շերտերի համար պարզապես թիվ է ու վիճակագրություն, գերազանցապես կենսամակարդակի էական բարձրացմանը չհանգեցնող, նույնքան էլ խոստումնալից է երկրի վարկանշի ու ֆինանսական վստահելիության տեսանկյունից:

Բայց արդյո՞ք մեզ համար առաջնայինն աճի «փուչիկի» հիման վրա վարկանիշ ձեռք բերելն է, թե՞ արժանավայել կյանքով ապրելը...

Վիճակագրական անորոշություն: Համաշխարհային տնտեսության մեջ տեղի ունեցող տեղաշարժերին, գործ-

[1] ՀՀ ՎԿ, այլ տվյալների բազաներ: Ազգային հաշիվներ, https://armstat.am/file/doc/99547248.xls

Նարինե ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

2021 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը՝ «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ, ապա ընդունվել մագիստրատուրա՝«Մակրոտնտեսական վերլուծություն» կրթական ծրագրով: 2023 թ-ից ՀՊՏՀ Մակրոէկոնոմիկայի ամբիոնի ասպիրանտ է: 2020 թ.-ից ներգրավված է ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտական խմբերում՝ որպես հրավիրյալ փորձագետ: Ներկայումս աշխատում է ՀՀ Ֆինանսների նախարարությունում՝ որպես մակրոտնտեսագետ:

Հեղինակ է 20-ից ավելի գիտական հրապարակումների, ինչպես նաև համահեղինակ՝ 5 կոլեկտիվ մենագրության:

https://orcid.org/0000-0003-0272-5868

ընկեր երկրների հետ հարաբերությունների ոչ միարժեքությանը, ներտնտեսական անկայուն երևույթների ի հայտ գալուն զուգահեռ՝ հայաստանյան տնտեսության շուրջ ձևավորվող սպասելիքների ու առկա իրականության վերաբերյալ վստահության երկվության համարպարարտ հող են նախապատրաստում վիճակագրական դաշտում ստեղծված ու արդեն պարբերաբար դրսևորվող ոչ ճշգրիտ տեղեկությունները ու հաճախակի դարձած՝ նշանակալի ու նույնիսկ տնտեսական հեռանկարներ փոխող վերանայումները: Վերջինիս լավագույն վկայությունը, թերևս, դեռևս նախորդ տարվա նոյեմբեր ամսից աղմուկ հանած ոսկու արտադրությանշուրջ ձևավորված իրողություններն էին, երբ ոսկերչական արտադրության ոլորտում գրանցվում էր եռանիշ աճ: Վիճակագրական կոմիտեից ամիսներ պահանջվեցին այդ ցնցումից «վերականգնվելու» համար, ինչն էլ հետազոտողների, ինչպես նաև հայաստանյան վիճակագրական բազան որպես հավաստի տեղեկատվական աղբյուր օգտագործողների համար մի ամբողջ հետազոտական շրջափուլ արժեցավ: Արդյունքում ՎԿ-ն գլխիվայր վերանայեց իր դիրքորոշումը միայն ապրիլին՝ այս անգամ արդեն եռանիշ աճի «ծուղակը» գցելով հիմնային մետաղների ոլորտը: Ընդ որում, այդ վերանայումն արվեց առանց հանգամանալից հիմնավորման՝ նշելով միայն, որ 2024 թ. ապրիլյան հաշվետվության ներկայացման ժամանակ ճշգրտվել են արդյունաբերության արտադրանքի ծավալների նախորդ երեք ամիսների տվյալները՝ կապված տնտեսական գործունեության տեսակների 24 և 32 ծածկագրերով հատվածների միջև վերադասակարգման հետ[2]:

Սա ևս մեկ անգամ վկայում է, որ ներտնտեսական այս տեղաշարժերն այնքան նոր են մեր երկրի համար, որ անգամ վիճակագրական կոմիտեն, որպես հիմնական փաստահավաք կենտրոն, չի կարողանում մանևրել այդ հոսքերի միջև ու հիմնավորել դրանց դասակարգումը: Ուստի բախվում ենք ոչ հավաստի վիճակագրության խնդրին, ինչն էլ անվստահություն է առաջացնում հրապարակվող տեղեկատվության արժանահավատության նկատմամբ:

Արդյո՞ք վիճակագրական վերանայումների հերթական ալիքը չի հասնի առևտրի ոլորտին, դժվար է ասել, հետևաբար՝ դիտարկենք այն, ինչ ունենք այս պահին:

Տնտեսական աճի երկվություն: ՀՀ տնտեսության մեջ ձևավորվել էր մի այնպիսի միտում, որ տնտեսական աճը, կարծես, «մակաբուծում» է առևտրի և ծառայությունների հաշվին, ինչն էլ դրդում է փայփայել աճի այս, թեև անկանխատեսելի, սակայն դեռևս «հուսալի» աղբյուրները:

Նախորդող 2 տարիներին ձևավորված միտումը, կարծես թե, ապահովագրել էր



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

ՏԱՑ և տնտեսության ճյուղերի աճը՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (կուտակային, %)[3]

[2] ՀՀ ՎԿ, https://armstat.am/am/?nid=157&id=1049
[3] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2024 թ. հունվար-հունիսին, https://armstat.am/am/?nid=157&id=1025



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Առևտրի ոլորտի աճ և նրա ենթաճյուղերի նպաստումներ, ըստ ամիսների, 2023-2024 թթ.[4]

առևտրի ու ծառայությունների առաջատար դիրքերը՝ որպես տնտեսական աճի հիմնական գրավական, սակայն 2024 թ.-ն այլ բան էր նախանշում: Փոփոխությունները, որոնք տեղի են ունենում ՀՀ տնտեսությունում՝ դեռ 2023 թ. նոյեմբերից սկսած, միայն առաջին հայացքից են ուշագրավ: Հոդվածաշարի 1-ին հատվածում խոսել էինք, այսպես կոչված, «ոսկու սինդրոմի» մասին[5], ըստ որի՝ ձևավորվել էր այն թյուր կարծիքը, թե ծառայությունների ու առևտրի վրա հիմնված տնտեսությունը սկսել է աճել արդյունաբերության հաշվին: Սակայն, թվերի հետևում այլ իրականություն է թաքնված:

Ի վերջո, ինչն է նման բարձր աճի հիմքում, և արդյո՞ք կարելի է այս աճն «արժանահավատ» համարել: Եթե դիտարկենք առևտրի աճն ու դրանում առևտրի որոշակի տեսակների դերակատարումը, ապա կնկատենք, որ դիտարկվող բոլոր ամիսներին նշմարվում է միևնույն օրինաչափությունը. մեծածախ առևտրի անհավանական բարձր աճն առևտուրն առաջ տանող հիմնական խթանն է, իսկ մանրածախ առևտրի նպաստումն այս աճին 3-4 անգամ զիջում է մեծածախ առևտրին:

Պատկերն առավել արտահայտիչ է դառնում աճն ըստ ժամանակաշրջանների դիտարկման պարագայում, որը, միգուցե, ոգևորիչ լիներ հասարակության համար, սակայն արդեն իսկ «օրինաչափ» դարձած այս աճերն ու առևտրի որոշակի տեսակների դերային նման բաշխումները նույնիսկ տեսականորեն են ոչ ռացիոնալ և օրինաչափ: Գաղտնիք չէ, որ մեծածախ ու մանրածախ առևտրի հիմնական կապող օղակը ձեռք բերվող ու վաճառվող ապրանքների շղթան է. մեծածախ առևտուրը ենթադրում է ապրանքների մեծ խմբաքանակով ձեռքբերում և վերավաճառք այն սուբյեկտներին, որոնք սպառողների համար ապրանքների վերջնական մատակարար են համարվում (մանրածախ առևտրի կետեր): Այս պարզ ճշմարտությամբ առաջնորդվելով՝ թվում է, թե գործնականում պետք է առերեսվեինք վիճակագրական այլ իրականության, այսինքն՝ պետք է ունենայինք մեծածախ ու մանրածախ առևտրի գրեթե նույնական աճ և նույնաչափ նպաստումներ առևտրի ընդհանուր ծավալի աճին:

Սակայն, իրականությունն այլ է: Այժմ ականատես ենք լինում մեծածախ առևտրի գերբարձր աճի շարունակական շղթային, որը, միաժամանակ, չի ուղեկցվում մանրածախ առևտրի նույնաչափ կամ առնվազն մոտ աճով: Այս երևույթի միակ տրամաբանական բացատրությունը վերաարտահանման երևույթի առկայությունն ու

[4] ՀՀ վիճակագրական կոմիտե, Հրապարակումներ ըստ տարիների, https://armstat.am/am/?nid=82
[5] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2024 թ. հունվար-հունիսին, https://armstat.am/am/?nid=157&id=1025



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Առևտրի ոլորտի աճը և դրա ենթաճյուղերի նպաստումները (կուտակային), 2023-2024 թթ.[6]

բավական արտահայտիչ կերպով դրսևորումն է հայաստանյան տնտեսական կյանքում: Այսինքն՝ ապրանքների մի որոշ մաս, որպես մեծածախ առևտուր, ներմուծվում է Հայաստան, սակայն չի իրացվում ներքին տնտեսությունում, հետևաբար՝ չի վերածվում մանրածախ առևտրի, այլ, չնչին փոփոխությունների ենթարկվելով կամ առանց փոփոխությունների, վերաարտահանվում է երրորդ երկրներ, ինչն էլ հանգեցնում է մեծածախ առևտրի գերբարձր աճին, որը, սակայն, չի ուղեկցվում մանրածախ առևտրի նույնչափ աճով:

Իսկ ինչպիսին է պատկերը մանրածախ առևտրի ոլորտում: Եթե վերլուծենք մանրածախ առևտրի շրջանառությունը, ապա կնկատենք, որ դա գրանցում է համեմատաբար համեստ աճ՝ միաժամանակ ավելի կենտրոնանալով մեծ խանութների և սուպերմարկետների ձեռքում: Գծա-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

Մանրածախ առևտրի շրջանառությունն ըստ առևտրի օբյեկտների և առևտրի իրականացման վայրի տեսակների, 2020-2024 թթ., հունվար-հունիս[7]



ԳԾԱՊԱՏԿԵՐ 5

Մանրածախ ու մեծածախ առևտրի իրական աճը՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ,[8] %

[6] ՀՀ վիճակագրական կոմիտե: Հրապարակումներ ըստ տարիների, https://armstat.am/am/?nid=82
[7] ՀՀ վիճակագրական կոմիտե: Հրապարակումներ ըստ տարիների, https://armstat.am/am/?nid=82
[8] ՀՀ վիճակագրական կոմիտե: ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2024 թ. հունվար-հունիսին, https://armstat.am/am/?nid=82&id=2669

պատկեր 4-ի դիտարկումից ակնհայտ են դառնում մանրածախ առևտրի ոլորտի խնդիրները: Մասնավորապես՝ գնումների գերակշիռ մասը կատարվում է խանութներից. առևտրաշրջանառության ծավալների 83.2%-ը, ըստ առևտրի օբյեկտների բաշխվածության, հունվար-հունիսին բաժին է հասել խանութներին, սպառողական ապրանքների շուկաներում իրականացվող առևտրին՝ 3.8%-ը, գյուղատնտեսական արտադրանքի շուկաներին՝ 0.8%-ը, կրպակներին՝ 1.3%-ը, իսկ առևտրի այլ օբյեկտներին՝ 10.9%-ը (շարժչային և կենցաղային վառելիքի մանրածախ վաճառքի կետեր):

Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ տարեցտարի խանութների կշիռը մանրածախ առևտրի ոլորտում աճում է, մնացած օբյեկտներինը՝ փոքրանում: Սա ցույց է տալիս, որ մանրածախ առևտրի՝ անգամ այս համեստ աճը պահպանվում է՝ շնորհիվ խանութների դերի շարունակական աճի, այլ ոչ թե համեմատաբար փոքր շրջանառություն ունեցող առևտրի օբյեկտների և իրացման վայրերի: Արդյունքում կրպակների, սպառողական, գյուղատնտեսական ապրանքների շուկաների և առևտրի այլ օբյեկտների դերը նվազում է: Սակայն, խնդիրների շղթան այսքանով չի սահմանափակվում, քանի որ խանութների շարքում էլ պայքար է ընթանում մեծ և փոքր կետերի միջև: Իսկ ինչպես անզեն աչքով տեսանելի է, տարեցտարի փոքր խանութների մի մասը փակվում է՝ չդիմանալով ավելի խոշոր կետերի ու սուպերմարկետների հետ մրցակցությանը: Ընդ որում, այս խնդիրն առավել արտահայտիչ կերպով դրսևորվում է Երևանում: Բացի այդ, եթե դիտարկենք մանրածախ առևտրի աշխարհագրական կառուցվածքը, ապա կարող ենք բախվել առևտրի կենտրոնացվածության լուրջ խնդրին, ինչը նկատելի է գծապատկեր 5-ում: Այն պարագայում, երբ Երևանում է կենտրոնացած ՀՀ մշտական բնակչության շուրջ 37%-ը, որի բաժին է հասնում մանրածախ առևտրի մոտ 77%-ը կամ, եթե ավելի պատկերավոր ներկայացնենք, ապա Երևանում 1 շնչին ընկնող մանրածախ առևտրի շրջանառությունը գերազանցում է հանրապետական միջին ցուցանիշը ավելի քան 2 անգամ[9]: Ակնհայտ է, որ անհավասարության այս շղթան կարմիր թելի նման դրսևորվում է նաև տնտեսության մյուս ոլորտներում:

Ի վերջո, ո՞րն է լինելու մեծածախ ու մանրածախ առևտրի ոլորտների այս շարունակվող առճակատման «հանգրվանը»: Ինչպես նկատելի է գծապատկեր 6-ից, դիտարկվող ամբողջ ժամանակահատվածում այս երկու ոլորտների աճերի միջև առկա են եղել նշանակալի շեղումներ, որոնք, սակայն,



ԳԾԱՊԱՏԿԵՐ 6

Մեծածախ ու մանրածախ առևտրի աճն ու դրա շեղումը, %[10]

[9] ՀՀ վիճակագրական կոմիտե: ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2024 թ. հունվար-հունիսին, 1.2.6. Առևտուր և այլ ծառայություններ, https://armstat.am/file/article/sv_06_24a_126.pdf

[10] ՀՀ վիճակագրական կոմիտե: ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2024 թ. հունվար-հունիսին, 1.2.6. Առևտուր և այլ ծառայություններ, https://armstat.am/file/article/sv_06_24a_126.pdf, հեղինակի հաշվարկներ:

համեմատաբար ցածր և կայուն բնույթ են ունեցել 2022 թ.-ի տարեսկզբին, երբ ռուս-ուկրաինական հակամարտության սրման այդ ալիքը չէր հասցրել սեղմել օղակն առևտրի ոլորտի շուրջ: Պատերազմի գործոնը հանգեցրեց առևտրի մեծածախ ու մանրածախ ոլորտների միջև շեղումների նշանակալի ու շարունակվող աճին, որը, սակայն, սկսեց կրճատվել արդեն 2023 թ.-ի կեսերին, երբ նկատվում էր նաև պատերազմի գործոնի ազդեցության որոշակի թուլացում: Սակայն, 2023 թ.-ի տարեվերջին ի հայտ եկած «ոսկու սինդրոմը» փոշիացրեց առևտրի այս ոլորտների միջև նկատվող շեղումների նվազման հույսը: Ընդ որում, մինչև 2024 թ.-ի մարտն այդ շեղումն աճում էր ավելի արագ տեմպերով, քան նվազել էր նախորդող տարվա երկրորդ կեսին: Այս հանգամանքը ևս մեկ անգամ հավաստում է, որ մեր տնտեսությունը խոցելի է արտաքին գործոնների հանդեպ: Առևտրի ոլորտում նկատվող այս տատանումների շղթան նույնպես այդ գործոնների ազդեցության հետևանք է, երբ հայաստանյան շուկան դառնում է միջնորդ օղակ այլ երկրների ապրանքների իրացման համար: Արդյունքում գրանցվում են տրամաբանությունից դուրս գերաճեր մեծածախ առևտրում, որոնք, սակայն, չեն արտացոլում ներքին տնտեսության իրական պատկերը՝ չուղեկցվելով մանրածախ առևտրի նույնչափ կամ, գոնե, համեմատաբար մոտ աճով: Այնուամենայնիվ, սկսած ապրիլից, նկատվում է ոսկու գործոնի ազդեցության աստիճանական թուլացում, ինչն արտահայտվում է նաև առևտրի ցուցանիշներում՝ հանգեցնելով մեծածախ և մանրածախ առևտրի միջև առկա ճեղքի աստիճանական կրճատմանը: Իսկ թե որն է այդ ճեղքի օպտիմալ շեմը, դժվար է ասել, քանի որ առևտրի այս երկու տեսակի աճն անհամաչափ տատանողական է՝ սահմանափակելով դրա որոշման հնարավորությունը:

Ամփոփելով ՀՀ տնտեսության ևս մեկ առանցքային ճյուղի զարգացումների վերլուծությունը՝ ավելորդ անգամ պետք է շեշտենք, որ առևտրի ոլորտը նույնպես չափազանց զգայուն է արտաքին գործոնների ազդեցության նկատմամբ՝ հաշվի առնելով ինչպես մեծածախ առևտրի խոցելի բնույթը, այնպես էլ տրանսֆերտների հոսքից նշանակալիորեն կախում ունեցող մեր հասարակության սպառման սահմանափակ հնարավորությունները: Չնայած առևտրի ոլորտի՝ համեմատաբար կայուն ու բարձր շարունակական աճին, հոդվածում մատնանշված խնդիրները սահմանափակում են հասարակության լայն շերտերի՝ այդ աճը շոշափելիորեն զգալու հնարավորությունը: Մասնավորապես՝ մանրածախ առևտրի ոլորտում առկա տարածքային անհամաչափ բաշխվածությունը, ինչպես նաև փոքր բիզնեսի գործունեության սահմանափակ հնարավորություններն ու հաճախ անհաղթահարելի մրցակցությունը կասկածի տակ են դնում ոլորտի ներառականությունը: Ինչ վերաբերում է մեծածախ առևտրին, ապա արտաքին բարենպաստ գործոնների ազդեցությամբ շարունակաբար աճող այս շղթան ինչ-որ պահի, ի վերջո, կքանդվի՝ հանգեցնելով նաև առևտրի աճի էական դանդաղմանը: Ապրիլից ի վեր նկատվող մեծածախ ու մանրածախ առևտրի ճեղքի աստիճանական կրճատումն արդեն իսկ վկայում է արտաքին գործոնների ազդեցության թուլացման մասին, ինչը ենթադրում է նաև առևտրի՝ իր ներքին հնարավորությունների շուրջ կայունանալու հնարավորություն: Իսկ թե որքանով կհաջողվի հայաստանյան տնտեսությանը դիմակայել արտաքին գործոնների պահային ազդեցություններին, վերացնել վիճակագրական անորոշությունը և նվազեցնել մեծածախ ու մանրածախ առևտրի միջև առկա այս ճեղքը, ցույց կտա ժամանակը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2024 թ. հունվար-հունիսին, https://armstat.am/am/?nid=157&id=1025
2. ՀՀ վիճակագրական կոմիտե: ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2024 թ. հունվար-հունիսին, https://armstat.am/am/?nid=82&id=2669
3. ՀՀ վիճակագրական կոմիտե: ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2024 թ. հունվար-հունիսին, 1.2.6. Առևտուր և այլ ծառայություններ, https://armstat.am/file/article/sv_06_24a_126.pdf
4. ՀՀ վիճակագրական կոմիտե: Հրապարակումներ ըստ տարիների, https://armstat.am/am/?nid=82
5. ՀՀ ՎԿ, https://armstat.am/am/?nid=157&id=1049
6. ՀՀ ՎԿ, այլ տվյալների բազաներ, Ազգային հաշիվներ, https://armstat.am/file/doc/99547248.xls
7. Տնտեսական աճի գլուխկոտրուկը. արդյունաբերության հետքերով, «Ամբերդ» տեղեկագիր, 2024 թ., 1-ին համար, https://asue.am/upload/files/amberd/2024-year-1/1.pdf

Нарине ПЕТРОСЯН
Аспирант, АГЭУ

ПУЛЬС ЭКОНОМИКИ

ГОЛОВОЛОМКА ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА: ПО СЛЕДАМ ТОРГОВОГО СЕКТОРА

Экономические события в Армении настолько резкие и, очень часто, кратковременные, что даже в краткосрочной перспективе можно обнаружить существенные сдвиги в этой колеблющейся цепочке экономического роста.

Если статьи в предыдущих 2 выпусках были посвящены раскрытию темных углов промышленности и услуг, то на этот раз очередь торговли. Этот сектор, который связан со сферой услуг, продолжает демонстрировать весьма многообещающий рост. Однако на повестке дня остается следующий вопрос. до каких пор мы можем надеяться на такой рост…

Мы рассмотрим эту и подобную цепочку вопросов в статье, пытаясь придать определенность этому узлу неопределенности роста.

Ключевые слова: *экономический рост, торговый разрыв, оптовая торговля, конкурентоспособность, неопределенность, двойственность роста*

Narine PETROSYAN
PhD student, ASUE

PULSE OF ECONOMY

PUZZLE OF ECONOMIC GROWTH: IN THE TRAILS OF TRADE SECTOR

Armenia's economic developments are so sharp and, very often, sudden that even in the short term significant shifts can be found in this fluctuating chain of economic growth.

While the papers in the previous 2 issues were devoted to revealing the dark corners of industry and services, this time it is the turn of the trade. This sector, which is related to the service sector, continues to register quite promising growth. However, the following question remains on the agenda: how long can we expect this trend to continue?

In this paper we will look at this and similar questions, trying to bring clarity to this node of growth uncertainty.

Keywords: *economic growth, trade gap, wholesale, competitiveness, uncertainty, duality of growth*